ՀՄԿ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

unicef
յուրաքանչյուր
երեխայի համար

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ



## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին, և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը: ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է, որպեսզի Հայաստանում յուրաքանչյուր երեխա լինի սիրված, սնված և խնամված:

Հիմնվելով ավելի քան 75 տարվա միջազգային փորձի և Հայաստանի երեխաների համար գրեթե 30 տարվա հաջողությունների վրա՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը պարտավորություն է ստանձնում բարելավելու ամենախոցելի՝ աղքատության և մեկուսացման մեջ ապրող երեխաների կյանքը:

Ստեղծման պահից ի վեր ՅՈՒՆԻՍԵՖ-ն ամբողջությամբ ֆինանսավորվում է անհատների, մասնավոր հատվածի, հիմնադրամների և կառավարությունների կամավոր նվիրատվություններով:

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեությանը ծանոթանալու համար այցելեք **www.unicef.am** և **www.babycef.am** կայքերը:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

**Մեթոդական ուղեցույց**

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ
ԳՄԴ

Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա., Մարգարյան Լ.Հ., Հակոբյան Լ.Գ., Հարությունյան Գ.Հ.: «Անհատական ուսուցման և զարգացման պլան» մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024: 46 էջ:

Սույն ուղեցույցը մշակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ՝ Օքսֆորդ Փոլիսի Մենեջմենթ ինստիտուտի միջազգային փորձագետներ Անդրեաս Կարիստինոսի, Սոֆիա Կուկուվինուի և Ստատիշ Տրիանտաֆիլուի փորձագիտական խմբի կողմից իրականացվող «Հատուկ կրթության և զարգացման կարիքների գնահատման վերանայում» ծրագրի շրջանակներում:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի N08-Ն հրամանով՝ որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

**Հեղինակներ՝**

Արաքսիա Հովհաննեսի Սվաջյան

Հայկուհի Արտաշեսի Ադամյան

Անի Արմենի Գարեգինյան

Լիանա Հովհաննեսի Մարգարյան

Լուսինե Գրավիկի Հակոբյան

Գայանե Հենրիկի Հարությունյան

**Մասնագիտական խմբագիր՝** մ.գ.թ., դոցենտ Արաքսիա Հովհաննեսի Սվաջյան

**Գրախոսներ՝**

Ալինա Տիգրանի Մանուկյան

Թերեզա Յուրիի Ազատյան

**Խմբագիր՝** Հայկանուշ Անատոլի Սարգսյան

**Համակարգչային ձևավորում՝** Աստղիկ Ռոբերտի Ստեփանյան
Հեղինե Լյովայի Դավթյան

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) գրավոր թույլտվությունը՝ հարցում ուղարկելով հետևյալ հասցեներին. ՅՈՒՆԻՍԵՖ, Պետրոս Ադամյան փող. 14, Երևան 0010, էլ. հասցե՝ yerevan@unicef.org ՀՄԿ, Քաջազնունի 12, Երևան 0070, էլ. հասցե՝ hmkentron.yerevan@gmail.com

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն (ՀՄԿ)

© Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հասկացությունների բառարան ..... 4

Ներածություն ..... 6

ԱՈՒԶՊ-ը որպես կրթության հասանելիության միջոց ..... 8

ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացը ..... 13

Քայլ 1. Գնահատում ..... 14

Քայլ 2. Պլանավորում ..... 15

Քայլ 3. Իրականացում ..... 18

Քայլ 4. Մշտադիտարկում և արդյունավետության գնահատում ..... 20

ԱՈՒԶՊ-ի մշակում և ձևաթղթի լրացում ..... 22

Գրականության ցանկ ..... 45

## ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

**Անհատական ուսուցման և զարգացման պլան՝** երեխայի կարիքի և առանձնահատկությունների հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության տարեկան նպատակները, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (կարիքի դեպքում՝ նաև աջակցող ծառայությունները) և ժամկետները՝ երեխայի համար հասանելի դարձնելու համար նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և կրթական ծրագրերի սահմանված վերջնարդյունքները:

**Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններ՝** յուրաքանչյուր երեխայի նախադպրոցական կրթական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված զարգացման և ուսուցման մեթոդների, անհատական ուսուցման, տեխնիկական միջոցների, այդ թվում՝ աջակցող տեխնոլոգիաների, միջավայրի, ինչպես նաև մանկավարժահոգեբանական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն:

**Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝** երեխայի՝ նախադպրոցական կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտում, կրթության և զարգացման համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմանների սահմանում:

**Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա՝** խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտուալ (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսումնադաստիարակչական գործընթացի հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սան, որին նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ:

**Բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սան՝** կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, որի ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր են, որի հետևանքով երեխան իր ներուժը լիարժեք զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայությունների, գործողությունների, միջոցների) կարիք ունի:

**Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝** ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է երեխային, նրա ծնողին կամ օրինական ներկայացուցչին և մանկավարժական աշխատողին:

**Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝** երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, ուսումնադաստիարակչական գործընթացներին աջակցող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք:

**Ներառական կրթություն՝** յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովում:

**Խելամիտ հարմարեցում՝** անհրաժեշտ և համապատասխան փոփոխությունների և հարմարեցումների (շտկումների) կատարում, որոնք չեն առաջացնում անհամաչափ կամ անհարկի բեռ և ուղղված են հաշմանդամություն ունեցող անձի՝ մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվելուն:

**Աջակցող միջոցներ՝** ցանկացած ապրանք, գործիք, սարք կամ տեխնոլոգիա, որը հարմարեցված կամ հատուկ կերպով նախագծված է հաշմանդամություն ունեցող անձի ֆունկցիոնալությունը բարելավելու համար: «Աջակցող միջոցներ» եզրույթը չի ներառում բժշկական սարքավորումները, որոնք բժշկական միջամտությամբ փոխպատվաստված են կամ փոխարինողն են որևէ սարքի:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Անհատական ուսուցման և զարգացման պլանը** (այսուհետ՝ ԱՈՒԶՊ) սանի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների ու ծրագրերի բովանդակության հիման վրա մշակված փաստաթուղթ է: Այն հանդիսանում է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սանի կրթության և զարգացման կազմակերպման հիմքը և մշակվում է մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից, որի կազմում ներառվում են տվյալ խմբի դաստիարակը, դաստիարակի օգնականը, երաժշտության դաստիարակը, ֆիզիրահանգիչը, մեթոդիստը, մանկավարժական այլ աշխատողներ և բուժքույրը:

Ըստ ՀՀ հանրակրթության մասին օրենքի՝ ԱՈՒԶՊ-ը սահմանվում է հետևյալ կերպ. *«Անհատական ուսուցման և զարգացման պլան՝ երեխայի կարիքի և առանձնահատկությունների հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության տարեկան նպատակները, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (կարիքի դեպքում՝ նաև աջակցող ծառայությունները) և ժամկետները՝ երեխայի համար հասանելի դարձնելու համար նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և կրթական ծրագրերի սահմանված վերջնարդյունքները»:*

ԱՈՒԶՊ-ը մշակվում է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր այն երեխաների համար, ովքեր ուսումնադաստիարակչական գործընթացում ընդգրկվելու, ակտիվ մասնակցելու և առաջադիմելու համար ունեն առանձնահատուկ պայմանների կարիք: Այն յուրօրինակ քարտեզ է, որն ուղղորդում է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին իրենց ուսումնադաստիարակչական գործընթացում՝ ապահովելով հնարավորինս հարթ և անխոչընդոտ ճանապարհ:

ԱՈՒԶՊ-ը հնարավորություն է տալիս համատեղ պլանավորել դաստիարակների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների աշխատանքները, առաջադրել խնդիրներ, դրանց հաղթահարման համար սահմանված նպատակներ, հաջորդական քայլեր և վերջնարդյունքներ:

Անհատական ուսուցման և զարգացման պլանը, որպես երեխայի ուսումնադաստիարակչական և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների արդյունավետ անհատական պլանավորում, պետք է ներառի երեխայի կրթական և զարգացման կարիքների հիմնական ոլորտները, այդ կարիքները բավարարելու համար սահմանված խելամիտ հարմարեցումները, ծրագրային հարմարեցումները, աջակցող ծառայությունների տեսակներն ու ծավալները: Ընդհանուր առմամբ ԱՈՒԶՊ-ը կարող ենք դիտարկել որպես համապարփակ մի փաստաթուղթ, որը թույլ է տալիս հասկանալ՝ որտեղ է գտնվում երեխան, ուր է նա գնալու, ինչի է հասնելու,

ինչ միջոցներով կամ աջակցությամբ, ինչպես նաև՝ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը:

***Ո՞ւմ համար է նախատեսված ուղեցույցը***

Սույն ուղեցույցի նպատակն է աջակցել դաստիարակներին, դաստիարակի օգնականներին, մանկավարժահոգեբանական ծառայություններ մատուցող մասնագետներին և ծնողներին՝ հնարավորություն տալով նրանց վարել գործնական և իրատեսական երկխոսություն սանի կարիքների վերաբերյալ, գտնել այդ կարիքները բավարարելու ստեղծագործ ուղիներ, ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացն իրականացնել առավել հստակ և համակարգված՝ արդյունքում ունենալով գործուն աշխատանքային փաստաթուղթ:

***Ի՞նչ կառուցվածք ունի ուղեցույցը***

Ուղեցույցում մատչելի կերպով ներկայացված են կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորման և իրականացման, ինչպես նաև ԱՈՒԶՊ-ի մշակման, վերանայման և գնահատման գործընթացները՝ հիմքում ունենալով «Կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը» և «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը: Վերջիններս առանցքային փաստաթղթեր են կրթության և զարգացման ներառականության ապահովման գործընթացում և իրավական հիմքեր են ապահովում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար:

Համապատասխան իրավական ակտերում սահմանված է, թե ինչ կառուցվածք պետք է ունենա ԱՈՒԶՊ-ը, ովքեր և ինչ ներդրում կարող են ունենալ այս փաստաթղթի մշակման և իրականացման գործընթացում, իսկ սույն ուղեցույցում տրվում են մեթոդական ցուցումներ, թե ինչպես պետք է իրականացնել այս գործընթացը, որպեսզի այն հնարավորինս արդյունավետ լինի:

Հարգելի՛ մանկավարժներ,

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և զարգացման հաջողությունը մեծապես կախված է այդ գործընթացի արդյունավետ պլանավորումից և «որակյալ» ԱՈՒԶՊ-ից:

## ԱՈՒԶՊ-Ը ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Ուսուցման, ուսումնառության և մանկավարժահոգեբանական ծառայությունների **անհատական պլանավորում:**

**Համակարգ**, որը թույլ է տալիս հստակ տեսնել երեխայի կրթության ճանապարհային քարտեզը:

**Փաստաթուղթ** երեխայի կրթական ծրագրի և անհրաժեշտ հարմարեցումների վերաբերյալ:

ԱՈՒԶՊ-ը հնարավորություն է տալիս դաստիարակներին ապահովել որակյալ ուսումնառություն և զարգացում, արդյունավետ դասավանդում, ինչպես նաև.

- անհրաժեշտության դեպքում մշակել այն կրթական ծրագրերի, ծրագրային բաղադրիչների և անհրաժեշտ ուսումնամեթոդական միջոցների հարմարեցումներ, որոնց կարիքն ունի տվյալ երեխան,
- սահմանել խելամիտ հարմարեցումներ և նպատակների հաղթահարման ուղիներ,
- հետևել երեխայի առաջընթացին, ուսուցման անհատական նպատակների հաղթահարման ընթացքին և արձանագրել սանի ձեռքբերումները,
- ներգրավել երեխային և նրա ծնողներին ուսումնառության և դաստիարակության պլանավորման գործընթացում,
- ապահովել երեխայի հետ աշխատող մանկավարժահոգեբանական աշխատակիցների թիմային արդյունավետ աշխատանքը:

ԱՈՒԶՊ-ի մշակման, իրականացման և գնահատման գործընթացների հաջողությունը մեծապես կախված է մի քանի հիմնական սկզբունքների պահպանումից: Այդ սկզբունքներն են.

- Ապահովել երեխայի հետ աշխատող բոլոր մանկավարժների և մասնագետների ներգրավվածությունը
- Ներառել երեխային և ծնողին ուսուցման պլանավորման գործընթացում
- Կիրառել նորարարական մոտեցումներ

- Ապահովել խթանող միջավայր
- Լինել համբերատար
- Ապահովել միասնական մոտեցում
- Ունենալ իրատեսական ակնկալիքներ
- Պահպանել գաղտնիություն

## Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ԱՈՒԶՊ-Ը

ԱՈՒԶՊ-ը երեխայի ուժեղ կողմերի և կարիքների վրա հիմնված իմաստալից, չափելի, կառավարելի և գնահատելի փաստաթուղթ է, որը նկարագրում է սանի/երեխայի կրթության արդյունավետ կազմակերպման ծրագիրը և տրամադրվող մանկավարժահոգեբանական ծառայությունները: ԱՈՒԶՊ-ը կարելի է դիտարկել նաև որպես հաշվետվողական գործիք դաստիարակների, երեխաների, ծնողների և կրթության կազմակերպման պատասխանատու մասնագետների համար (NCSE, 2006):

## Ո՞ՒՄ ՀԱՄԱՐ Է ՄՇԱԿՎՈՒՄ ԱՈՒԶՊ-Ը

ԱՈՒԶՊ-ը մշակվում է այն երեխաների համար, որոնք գնահատվել են Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (այսուհետ՝ ՏՄԱԿ) կողմից և ստացել եզրակացություն կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաների համար, որոնք խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով, ինչպես նաև բացառիկ ընդունակություններով պայմանավորված՝ ունեն ուսուցման դժվարություններ, և դրանք հաղթահարելու համար անհրաժեշտ են կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններ, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ[1]:

## ԻՆՉՈ՞Ւ Է ԱՈՒԶՊ-Ը ԿԱՐԵՎՈՐ

ԱՈՒԶՊ-ը կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության արդյունավետ կազմակերպման և իրականացման հիմքն է, որտեղ սահմանվում են այն իրատեսական նպատակները, ուսուցման և դաստիարակության մեթոդներն ու ռազմավարությունները, խելամիտ հարմարեցումները և անհրաժեշտ մանկավարժահոգեբանական ծառայությունները, որոնք ուղղված են երեխաների կրթական կարիքները բավարարելուն, ուսումնադաստիարակչական գործընթացում

[1] «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, ՀՕ-217-Ն

առաջընթաց, դինամիկ զարգացում և հաջորդ կրթական միջավայր սահուն անցում ապահովելուն: Այս ամենը հնարավոր է իրականացնել միայն այն դեպքում, եթե ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացում ներգրավված են նաև երեխան և նրա ծնողը, իսկ մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների միջև առկա են համագործակցային հարաբերություններ և թիմային մոտեցում (CSDE, 2023, Թադևոսյան, 2016):

ԱՈՒԶՊ-ի արդյունավետ մշակումը կարևորվում է նրանով, որ.

- Աջակցում է նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատող դաստիարակներին իրականացնելու **երեխաների կարիքներից բխող *նպատակներին համապատասխան*** ուսումնադաստիարակչական գործընթաց:
- Նպաստում է կրթական գործընթացում և նախադպրոցական միջավայրում ***երեխաների ներգրավմանը***:
- Ամրագրում է աջակցող մասնագետների կողմից *սահմանված նպատակների իրականացման համար նախատեսված* **ժամկետները, աշխատանքների իրականացման ռազմավարությունները, միջավայրային հարմարեցումները, ակնկալվող արդյունքները**:
- Հնարավորություն է տալիս համակարգված եղանակով ***տեղեկատվություն փոխանակել*** նախադպրոցական ուսումնական հաստատության, երեխայի, ընտանիքի և այլ շահագրգիռ կողմերի միջև:
- Օգնում է նախադպրոցական ուսումնական հաստատություններին պլանավորման համաձայն ***ապահովել այն ռեսուրսները, խելամիտ հարմարեցումները, աջակցող սարքերն ու տեխնոլոգիաները***, որոնք անհրաժեշտ են երեխային արդյունավետ ուսուցման և զարգացման համար:
- Խթանում է ***երեխաների ակտիվությունն ու մասնակցությունն*** ուսումնառության գործընթացում:
- Ստեղծում է ***գործընկերային հարաբերություններ*** կրթության գործընթացում ներգրավված բոլոր օղակների միջև:

## Ո՞Վ Է ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՈՒԶՊ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՈՒԶՊ-ը փաստաթուղթ է, որը կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ուսուցման և զարգացման պլանավորման գործընթացում համագործակցային աշխատանք ծավալելու հնարավորություն է ընձեռում այդ գործընթացում ընդգրկված բոլոր կողմերին: Կարևոր է ապահովել, որ երեխային լավ ճանաչող անձինք, մասնավորապես՝ ծնողները (խնամակալներ), դաստիարակները, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետները, ՏՄԱԿ-ի անձնակազմն ակտիվորեն ներգրավված լինեն ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացում, քանի որ յուրաքանչյուր մասնակցի կողմից տրամադրված տեղեկատվություն կարող է կարևոր նշանակություն ունենալ աշխատանքների պլանավորման համար:

ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացում խիստ կարևոր է ծնողի մասնակցության ապահովումը և նրանից երեխայի մասին արժեքավոր տեղեկատվության ստացումը: Յուրաքանչյուր մասնակցի և, մասնավորապես, ծնողի տրամադրած տեղեկատվությունը կարևոր է երեխայի ուժեղ կողմերի, դժվարությունների, հետաքրքրությունների և հնարավորությունների վերաբերյալ իրատեսական պատկերացումներ կազմելու և դրանց համապատասխան պլանավորվող աշխատանքները, ինչպես նաև անհրաժեշտ հարմարեցումներն ու ծառայությունները քննարկելու տեսակետից (CSDE, 2023):

## Ե՞ՐԲ Է ՄՇԱԿՎՈՒՄ ԱՈՒԶՊ-Ը

Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ ՏՄԱԿ-ի կողմից տրված եզրակացությունն ու արձանագրությունը ստանալուց հետո, 5-10 աշխատանքային օրվա ընթացքում, նախադպրոցական ուսումնական հաստատության ու ՏՄԱԿ-ի մասնագետները միասին մշակում և հաստատում են ԱՈՒԶՊ-ը՝ սահմանելով կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանները և այդ պայմանների ապահովման ուղղությամբ երեխային, նրա մանկավարժներին և ծնողին տրամադրվող աջակցության ծառայությունները՝ ըստ մակարդակների: Յուրաքանչյուր հաջորդ տարում, այդ թվում՝ հերթական գնահատումների ժամանակ, ԱՈՒԶՊ-ը մշակվում և հաստատվում է մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ը[2]:

ԱՈՒԶՊ-ը մշակվում է մեկ ուսումնական տարվա համար:

## ԱՈՒԶՊ-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱՈՒԶՊ-ում ամփոփված են երեխայի անձնական տվյալները, կրթության կազմակերպման երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներն՝ ըստ ծրագրային բաղադրիչների, նրան տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների պլանավորումը և նկարագիրը, ինչպես նաև ընթացիկ և տարեվերջյան

[2] «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի N 34-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 150-Ն հրամանի հավելված

գնահատման արդյունքները: Նշված տեղեկատվությունը համակարգված ներկայացվում է ԱՈՒԶՊ-ի տիպային ձևում՝ համապատասխանաբար յոթ բաժիններով:

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ ԱՈՒԶՊ-ՈՒՄ ՆԱԽԱՆՇՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՈՒԶՊ-ում նախանշված կրթական ծառայությունները դաստիարակների և մանկավարժահոգեբանական աջակցության մասնագետների կողմից մատուցվում են ինչպես ուսումնական պարապմունքների ժամանակ, այնպես էլ դրանցից դուրս: Ծնողի ցանկությամբ ԱՈՒԶՊ-ով նախատեսված մասնագիտական ծառայությունները կարող են մատուցվել նաև ՏՄԱԿ-ում՝ կախված երեխայի կարիքներից կամ նախադպրոցական ուսումնական հաստատությունում անհրաժեշտ պայմանների բացակայությունից: Երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացում հանդիպող դժվարությունների բնույթով պայմանավորված՝ անհատական ուսուցման և զարգացման պլանավորման ժամանակ կարող է որոշում կայացվել հարմարեցումներ ապահովել միայն որևէ բաղադրիչի կամ բոլոր ծրագրային բաղադրիչների համար: Եթե երեխան որևէ ծրագրային բաղադրիչի ուսումնասիրության ժամանակ դժվարություններ չի ունենում, նրա համար տվյալ ծրագրային բաղադրիչի հարմարեցումներ չեն ապահովվում: Նույն մոտեցումը գործում է նաև մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման դեպքում, և դրանց տրամադրման անհրաժեշտությունը, տեսակները, ծավալները որոշվում են՝ հիմնվելով երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների վրա: ԱՈՒԶՊ-ում պլանավորման կարևոր բաղադրիչ են միջավայրային և անհատական խելամիտ հարմարեցումները, որոնց ապահովման անհրաժեշտությունը ևս բխում է գնահատման արդյունքներից: Այսպիսով, անհատական ուսուցման և զարգացման պլանավորման երեք կարևոր բաղադրիչներն են ծրագրային բաղադրիչների հարմարեցումները, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, միջավայրային և խելամիտ հարմարեցումները, որոնք յուրաքանչյուր երեխայի դեպքում կարող են տարբեր պատկեր ունենալ:

## ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Երեխայի ԱՈՒԶՊ-ի և նրա անձնական կյանքի տվյալները գաղտնի են և չեն փոխանցվում երրորդ անձանց՝ առանց ծնողի գրավոր համաձայնության: Երեխայի տվյալների փոխանցումը երրորդ անձանց առանց ծնողի գրավոր համաձայնության հնարավոր է միայն ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

## ԱՈՒԶՊ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հարգելի՛ դաստիարակ,

Ձեր արժեքավոր ներդրումն ունենալով երեխայի ԱՈՒԶՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում՝ Դուք ոչ միայն աջակցում եք նրա ուսուցման և զարգացման առաջընթացի գրանցմանը և արդյունավետ մասնակցության բարելավմանը, այլև օգնում երեխային հաջողության հասնել նախադպրոցական կրթական ծրագրերում:

Հիշե՛ք՝ Ձեր ակտիվ մասնակցությունն ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացում այն առավել իրատեսական է դարձնում, քանի որ դա հնարավորություն է տալիս պլանավորման գործընթացում հաշվի առնել երեխայի մասին Ձեր տրամադրած կարևոր տեղեկությունները նրա նախասիրությունների, հետաքրքրությունների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ:

**ՀԻՇԵՑՈՒՄ.** ԱՈՒԶՊ-ը մշակվում և հաստատվում է մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ը: ԱՈՒԶՊ-ը մշակվում է մեկ ուսումնական տարվա համար:

Անհատական ուսուցման, զարգացման և աջակցության գործընթացը բաղկացած է 4 փուլից.



### *Քայլ 1. Գնահատում*

ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացը մեկնարկում է երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումով: Նախ և առաջ անհրաժեշտ է «ծանոթանալ» երեխայի հետ՝ բացահայտելով նրա կարողությունները, հմտությունները, նախասիրությունները և զարգացման առանձնահատկությունները, տարբեր աղբյուրներից հավաքագրել հավաստի տեղեկատվություն նրա կրթությանն ու զարգացմանը խոչընդոտող գործոնների, երեխայի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ (Աղյուսակ 1) (NCSE, 2006; CSDE, 2023):

**Աղյուսակ 1.** Երեխայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հիմնական կետերը

| Երեխայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հիմնական կետերը |
|---|
| ▪ երեխայի մասին ընդհանուր տեղեկատվությունը (անձնական տվյալներ, ուսումնառության ոճեր, անձնային առանձնահատկություններ),<br>▪ երեխայի ուժեղ կողմերը, կարիքները, կատարողականության առկա մակարդակը,<br>▪ երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման եզրակացության և արձանագրության մեջ ներառված տեղեկատվությունը, որտեղ սահմանում են նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանները, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումները և երեխային տրամադրվող կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակը և աստիճանը,<br>▪ նախորդ ուսումնական տարվա համար մշակված ԱՈՒԶՊ-ը (առկայության դեպքում),<br>▪ այլ տեղեկատվություն, եթե առկա է: |

Իհարկե, ՏՄԱԿ-ի կողմից երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքում տրամադրված եզրակացությունը կարևոր տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ է, ինչը հիմք է հանդիսանում ԱՈՒԶՊ-ի մշակման համար: Սակայն հարկ է նշել, որ երեխայի կրթության և զարգացման արդյունավետ պլանավորման և իրականացման համար արժեքավոր տեղեկատվություն կարող են տրամադրել նաև նրա ուսումնառության ընթացքում իրականացված գնահատումների և դիտարկումների արդյունքները: Այդ իսկ պատճառով եթե առկա է նման տեղեկատվություն, անհրաժեշտ է ծանոթանալ նաև դրան, ինչպես նաև երեխայի հետ զրույցի միջոցով հավաքագրել տեղեկատվություն նրա հետաքրքրությունների և նախասիրությունների՝ ավելի հեշտ սովորելուն նպաստող գործոնների վերաբերյալ:

Այս փուլում կարևոր է, որ երեխայի հետ աշխատող բոլոր մասնագետները ծանոթանան երեխային վերաբերող առկա տեղեկատվությանը, ինչը հիմք է հանդիսանալու հաջորդ՝ պլանավորման փուլի համար:

### *Քայլ 2. Պլանավորում*

Պլանավորման գործընթացն իրականացվում է համագործակցային աշխատանքի միջոցով, որի առանցքում պետք է լինի երեխան: Մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ մոտեցումներ են ներկայացվում երեխայակենտրոն աշխատանքների կազմակերպման համար, սակայն ամենակարևոր մոտեցումներից մեկը երեխայի՝ իր ուսումնառության և նախադպրոցական ուսումնական հաստատության մասին ունեցած պատկերացումների հիման վրա աշխատանքների կազմակերպումն է: Երբ երեխան զգում է, որ իրեն արժևորում են, փորձում են իրեն աջակցել և ուղղորդել, հարցնում են, թե ինքն ինչն է կարևորում այս կամ այն հարցում, ինքնաբերաբար նրա պատկերացումներն իր ուսումնառության վերաբերյալ ևս իմաստավորվում են, ինչն ուղղակիորեն անդրադառնում է նրա ուսումնական մոտիվացիայի վրա: Երեխան սկսում է ավելի սթափ և պատասխանատու լինել սեփական քայլերի նկատմամբ, կարևորում է իր յուրացրած յուրաքանչյուր գիտելիքի, հմտության արժեքը:

Երեխային մոտիվացնելը, նրա ուժերին վստահություն հաղորդելը, նրա դերը ուսուցման գործընթացում կարևորելը ոչ միայն նպաստում են նրա որակյալ ուսումնառության ապահովմանը, այլ նաև լուծվում են մի շարք դաստիարակչական խնդիրներ. նկատելի է դառնում, թե ինչպես է երեխան վերափոխում իր վարքը՝ դառնում ավելի գործնական, կարևորում իր յուրաքանչյուր քայլը, փորձում անընդհատ ստանալ իր հաջողությունների և բացթողումների հետադարձ կապը՝ դրանք բարելավելու նպատակով (NCSE, 2006):

Այսպիսով, նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի ուսուցումը և դաստիարակությունը պլանավորելիս, նրա ուժեղ և թույլ կողմերը, նախասիրությունները դիտարկելիս նրա ակտիվ դերակատարումը շատ կարևոր է՝ հաշվի առնելով նրա առանձնահատկությունները և առավելագույն ներուժը: Այս ամենը թույլ կտա ավելի հստակ նախանշել նրա կրթության և զարգացման առաջնահերթությունները:

Ակտիվ և շարունակական համագործակցությունը երեխայի, նրա ընտանիքի և նախադպրոցական ուսումնական հաստատության միջև ակնհայտորեն նպաստում է պլանավորման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Երեխայի հնարավոր մասնակցությունն իր ուսուցման պլանի մշակման գործընթացին հնարավորություն կտա ունենալու ավելի արդյունավետ, իրատեսական, իր կարողություններին և նախասիրություններին համապատասխան նպատակներ: Բնականաբար, երեխայի ներգրավվածության բնույթն ու աստիճանը կարող են տարբեր լինել՝ կախված մի շարք գործոններից, ինչպիսիք են, օրինակ՝ տարիքը, հասկանալու և հաղորդակցվելու կարողությունը: Պլանավորման գործընթացում Էական նշանակություն ունի նաև այն, որ դաստիարակները, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներն ու

ծնողները երեխային օգնեն հնարավորինս լավ հասկանալու իր ուսուցման պլանավորման նպատակադրումները (Տիքա և ուրիշներ, 2018; CSDE, 2023):

ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացում շեշտադրվում է երեխայի կարողությունների, հմտությունների, նախասիրությունների և զարգացման առանձնահատկությունների վրա հիմնված նպատակների սահմանումը: Արդեն նախանշված առաջնահերթությունների հիման վրա ԱՈՒԶՊ-ում սահմանվում են ***երկարաժամկետ (տարեկան)*** և ***կարճաժամկետ նպատակներ***՝ հիմքում ունենալով նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունները և ակնկալվող վերջնարդյունքները, տարիքային զարգացման չափանիշները, ինչպես նաև երեխայի կարողությունների և հմտությունների առկա մակարդակը: Անհրաժեշտության դեպքում երեխայի ԱՈՒԶՊ-ում նրա կրթության համար սահմանված նպատակները կարող են վերանայվել և փոփոխվել (Թադևոսյան, 2016):

Երեխայի կրթության և զարգացման արդյունավետ կազմակերպման և իրականացման համար նրա ուսուցման գործընթացը պլանավորելիս պետք է մտածել «SMART»՝ սահմանելով նպատակներ, որոնք կլինեն կոնկրետ, չափելի, հասանելի, իրատեսական և ժամանակով սահմանափակված (Աղյուսակ 2) (CSDE, 2023):

**Աղյուսակ 2.** «SMART» նպատակների սահմանման ուղենիշներ

| Հատուկ, կոնկրետ (Specific) | Չափելի (Measurable) | Հասանելի, իրագործելի (Achievable) | Իրատեսական (Relevant) | Ժամանակով սահմանափակված (Time bound) |
|---|---|---|---|---|
| Կոնկրետ ինչի՞ եք ուզում հասնել: | Ինչպե՞ս եք հասկանալու, որ հասել եք սահմանված նպատակին: | Արդյո՞ք պլանավորումը հիմնված է երեխայի առկա կարողությունների և հնարավորություններ: Եթե նպատակը հասանելի չէ, ապա դրա իրագործման հավանականությունը նվազում է: | Իրատեսակա՞ն է արդյոք նպատակը. բխո՞ւմ է երեխայի կարիքներից, առաջնահերթություններից: | Ե՞րբ է պլանավորվում հասնել նպատակին: |
| Նպատակը պետք է լինի պարզ, հստակ և հակիրճ: | Նպատակը պետք է ձևակերպել այնպես, որ այն հնարավոր լինի չափել և դիտարկել: | Նպատակի հասանելիությունը սահմանվում է երեխայի սեփական փորձի հիման վրա՝ հաշվի առնելով առկա բոլոր ռեսուրսները՝ գիտելիք, | Նպատակը պետք է ներառի բոլոր այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ երեխայի՝ նպատակին հասնելու | Հստակ ժամկետների սահմանումը նպաստում է մոտիվացված աշխատելուն և չափելի է դարձնում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կարողություն, փորձ և այլն: | կարողության վրա: | ստացված արդյունքները: |

***Երկարաժամկետ (տարեկան) նպատակները*** հստակ սահմանում են կրթության և/կամ զարգացման ոլորտը՝ ցույց տալով ակնկալվող վերջնարդյունքը՝ գիտելիք, կարողություն, հմտություն, վարք (Աղյուսակ 3): Երկարաժամկետ նպատակներ սահմանելիս պետք է հաշվի առնել երեխայի կրթության և զարգացման առաջնահերթությունները և նրա իրական հնարավորությունները, որպեսզի դրանք հնարավոր լինի իրագործել, և ԱՈՒԶՊ-ը չդառնա մեծածավալ և անիրատեսական փաստաթուղթ:

Երեխաների համար այդ նպատակները պետք է սահմանվեն այնպես, որ.

- ապահովեն ուսուցման երեխայակենտրոն կազմակերպումը և իրականացումը, համապատասխանեն երեխայի համար նախանշված առաջնահերթություններին,
- առնչվեն երեխայի բացառիկ ունակություններին կամ առկա դժվարություններին,
- բխեն երեխայի կատարողականության առկա մակարդակից,
- հաշվի առնեն երեխայի նախկին ձեռքբերումները, ինչպես նաև զարգացման և առաջընթացի արագությունը,
- նշաձող հանդիսանան երեխայի զարգացման համար, միևնույն ժամանակ լինեն հասանելի,
- կենտրոնանան ոչ թե ծրագրային նյութերի ամբողջ ծավալի, այլ բովանդակային այն բաղադրիչների վրա, որոնք կյուրացնի երեխան,
- լինեն իրատեսական դասավանդման համար հասանելի ժամանակի և ռեսուրսների տեսանկյունից:

**Աղյուսակ 3.** Երկարաժամկետ (տարեկան) նպատակների սահմանման ձևաչափ

| ՈՎ | ԻՆՉ | ՈՐՏԵՂ |
|---|---|---|
| • Երեխայի անուն | • Ձևավորվող կարողություն, հմտություն, երեխայի վարք | • Միջավայր (ՆՈՒՀ, տուն, համայնք), գործունեության բնագավառ (խաղ, կրթություն, կենցաղ, ժամանց) |

Երկարաժամկետ նպատակները հիմք են հանդիսանում կարճաժամկետ նպատակների, ռազմավարությունների և գործողությունների մշակման համար: Ուսումնական տարվա համար սահմանված յուրաքանչյուր երկարաժամկետ (տարեկան) նպատակի հաղթահարմանն օժանդակելու համար այդ նպատակը բաժանվում է ավելի փոքր և իրագործելի քայլերի, որոնք կոչվում են ***կարճաժամկետ նպատակներ*** (CSDE, 2023):

Կարճաժամկետ նպատակները սահմանելիս պետք է հետևողական լինել, որպեսզի դրանք նույնպես լինեն կոնկրետ, չափելի, իրագործելի, իրատեսական, և նշվեն իրագործման ժամկետները: Կարևոր է աշխատանքների պլանավորման ժամանակ նշել նաև դասավանդման այն մեթոդները և հարմարեցումները, որոնք օգնելու են երեխային հասնելու այդ կարճաժամկետ արդյունքներին: Առավել հստակ և ճշգրիտ սահմանված կարճաժամկետ նպատակները երաշխավորում են արդյունավետություն և առաջընթաց (Աղյուսակ 4):

**Աղյուսակ 4.** Կարճաժամկետ նպատակների սահմանման ձևաչափ

| Երեխա՝ **ով** | Գործողություն՝ **ինչ, ինչպես** | Պայմաններ՝ **որտեղ, ում հետ, ինչով կամ ինչի հետ** | Հաջողության չափանիշը՝ **ինչպես**, օրինակ՝ հաճախականություն, տևողություն, ճշգրտություն, համապատասխանություն | Իրագործման ժամետներ՝ **երբ** |
|---|---|---|---|---|
| Աննան | սեփական հույզերն արտահայտում է բառերով | տեսողական աջակցությամբ և դաստիարակի հուշումներով, ՆՈՒՀ-ում գտնվելու ընթացքում | ամեն օր՝ օրը 2 անգամ | 20.12.2023 |
| Արմանը | հաշվում է մինչև 10-ը | դիդակտիկ նյութերի օգնությամբ (հաշվեձողիկներ, խորանարդիկներ և այլն) | անսխալ՝ 10-ից 8 դեպքերում | 15.10.2023 |
| Արսենը | համեմատում է տարվա չորս եղանակները | գտնելով համապատասխան նկար-քարտերը | 80% ճշգրտությամբ | 11.02.2024 |

### *Քայլ 3. Իրականացում*

Ուսուցման և զարգացման գործընթացը, որը հիմնված է ԱՈՒԶՊ-ի վրա, ենթադրում է ոչ միայն ծրագրային բաղադրիչների հարմարեցում, այլև դասավանդման նորարարական, ճկուն և բազմազան մեթոդների կիրառում: Անհրաժեշտ է ստեղծել նաև արձագանքող և խթանող կրթական միջավայր, կրթությունն ու զարգացումն իրականացնել ուսումնառության համընդհանուր դիզայնի սկզբունքների ու մոտեցումների կիրառմամբ (Աղյուսակ 5), ինչպես նաև տրամադրել երեխայի կարիքներին համապատասխան խելամիտ հարմարեցումներ: Այս ամենի ամբողջությունն ապահովում է երեխայի ներգրավվածության բարձր մակարդակ ինչպես ուսումնառության, այնպես էլ նախադպրոցական միջավայրում սոցիալականացման գործընթացներում:

ԱՈՒԶՊ-ում սահմանված նպատակների իրականացման ժամանակ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել ընդհանուր պարապմունքներին երեխայի մասնակցության, հասակակիցների հետ համատեղ աշխատելու, խմբային աշխատանքներում ներգրավվածության, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման, ԱՈՒԶՊ-ը մշակող և իրականացնող խմբի անդամների միջև համագործակցության գործընթացները: Օրինակ, լսողության խնդիրներով պայմանավորված կրթության և զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխայի ակտիվ մասնակցությունը և ներգրավվածությունը պարապմունքների ընթացքում ապահովելու համար կարող է ուսումնական նյութը և հանձնարարությունները տեսողական և տպագիր նյութերով (նկարներ, դիագրամներ, աղյուսակներ, պաստառներ, ենթագրերով տեսաֆիլմեր և այլն) զուգորդելու անհրաժեշտություն առաջանալ, կամ հարկ լինի խոսել ոչ շատ արագ, պարզ, հստակ, հասկանալի և ընդգծված արտասանությամբ: ԱՈՒԶՊ-ի իրականացման ընթացքում կարևոր է ժամանակ առ ժամանակ երեխայի նկարագրին և արդեն իսկ սահմանված նպատակներին անդրադառնալը: Սա հնարավորություն է տալիս պարբերաբար իրականացվող քննարկումների արդյունքում դուրս բերել ծագած խնդիրները և դժվարությունները, գտնել համապատասխան լուծումներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով հավելյալ ռեսուրսներ: ՏՄԱԿ-ները, անհրաժեշտության դեպքում նաև հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնները կարող են տրամադրել մասնագիտական աջակցություն, խորհրդատվություն, գրականություն, աշխատանքային նյութեր ինչպես դաստիարակներին և դաստիարակների օգնականներին, այնպես էլ մասնագետներին, ծնողներին և երեխաներին (Տիքա և ուրիշներ, 2018):

**Աղյուսակ 5.** Ուսումնառության համընդհանուր դիզայնի սկզբունքներ և մոտեցումներ

***Քայլ 4. Մշտադիտարկում և արդյունավետության գնահատում***

Իրականացվող աշխատանքների արդյունավետության գնահատման և դժվարությունների արձանագրման համար կարևոր են ԱՈՒԶՊ-ի իրականացման պարբերական գնահատումներն ու մշտադիտարկումը: Ինչպես նշվեց վերևում, ԱՈՒԶՊ-ի իրականացման համար պատասխանատու են դաստիարակները, դաստիարակների օգնականները, մանկավարժահոգեբանական աջակցության խումբը և ծնողները, ուստի այս անձանց մասնակցությունը տվյալ երեխայի հետ կապված բոլոր հանդիպումներին և քննարկումներին խիստ կարևոր է, քանի որ այն հնարավորություն է տալիս պարբերաբար արձանագրել երեխայի գրանցած արդյունքները, դրանց համապատասխանությունն ԱՈՒԶՊ-ում սահմանված երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներին, ի հայտ եկած դժվարությունները, նպատակադրումները կամ կիրառվող ուսուցման մեթոդների փոփոխության անհրաժեշտությունը: Պարբերաբար իրականացվող մշտադիտարկումները խմբին հնարավորություն կտան պարզել, թե ԱՈՒԶՊ-ում սահմանված որ նպատակները չեն հաղթահարվել, արդյոք անհրաժեշտություն կա նպատակները վերանայելու, ինչպես նաև վեր հանել և արձագանքել այն դեպքերին, երբ նպատակները սահմանված ժամանակից շուտ հաղթահարվել են, և նոր նպատակների կամ քայլերի սահմանման կարիք կա:

ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 150-Ն հրամանի հավելվածի համաձայն՝ ԱՈՒԶՊ-ի մշտադիտարկման և արդյունքների գնահատման գործընթացի պատասխանատուներն են նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը

և ՏՄԱԿ-ի տնօրենի տեղակալը, ովքեր երկու ամիսը մեկ անգամ հրավիրում են միասնական ժողով՝ ամփոփելու տվյալ ամիսների ընթացքում տրամադրված աջակցության ծառայությունները, արձանագրելու երեխաների ձեռքբերումները, առաջընթացը և առկա դժվարությունները, առաջարկներ ներկայացնելու այդ դժվարությունների հաղթահարման աշխատանքների ձևերի և մեթոդաբանության ուղղությամբ: Այս միասնական ժողովներն արձանագրվում են, իսկ արձանագրությունը հաստատում են ՏՄԱԿ-ի տնօրենի տեղակալը և նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը (Հավելված 2):

Մշտադիտարկման և արդյունքների գնահատման գործընթացում ներգրավված են ԱՈՒԶՊ-ը մշակող խմբի բոլոր անդամները: Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ԱՈՒԶՊ-ի մշակման և իրականացման աշխատանքների պատասխանատուն մեթոդիստն է, իսկ կոնկրետ երեխայի ԱՈՒԶՊ-ի մշակման և իրականացման գործընթացի համակարգող կարող է ընտրվել ԱՈՒԶՊ-ի խմբի անդամներից որևէ մեկը, օրինակ՝ դաստիարակը կամ ուսումնական հաստատության հոգեբանը:

## ԱՈՒԶՊ-Ի ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՈՒՄ

ԱՈՒԶՊ-ի պաշտոնական ձևաթուղթը հաստատված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 150-Ն հրամանով (Հավելված 1): Այն կազմված է յոթ բաժիններից, որոնցում համակարգված ներկայացվում է այն ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է երեխայի կրթության և զարգացման արդյունավետ կազմակերպման և իրականացման համար[3]: Բոլոր այդ բաժիններն առավել հստակ և ճշգրիտ լրացնելու համար անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացված ցուցումներին:

### Բաժին 1. Սանի տվյալներ

ԱՈՒԶՊ-ի առաջին բաժնում լրացվում են երեխայի անձնական տվյալները: Այդ տեղեկատվությունը հասանելի է ինչպես ուսումնական հաստատությանը, այնպես էլ ՏՄԱԿ-ին: Եթե կան տվյալներ, որոնք փոփոխության են ենթարկվել կամ մինչև ԱՈՒԶՊ-ի մշակումը հասանելի չեն եղել նշված հաստատություններին, ապա այդ տեղեկատվությունը տրամադրում է ծնողը: Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների տվյալների միասնական բազայի գործարկման դեպքում այդ տվյալներն ինքնաշխատ համակարգով կլրացվեն ԱՈՒԶՊ-ում:

| 1. ՍԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐ |
|---|
| 1.1 Ազգանուն, անուն, հայրանուն՝ |
| 1.2 Ծննդյան վայր՝ |
| 1.3 Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝ |
| 1.4 Սեռը՝ ◻ իգական ◻ արական |
| 1.5 Քաղաքացիությունը՝ |
| 1.6 Բնակության հասցեն՝ |
| 1.7 Ուսումնական հաստատությունը՝ |
| 1.8 Խումբ (նշել ուսումնական տարին)՝ |
| 1.9 Ծնողների (օրինական ներկայացուցիչների) անուններն ու հեռախոսահամարները՝ |
| 1.10 Արտակարգ իրավիճակների դեպքում՝ կապի միջոց՝ աշխատանքային և բնակարանի հեռախոսահամարներ՝ |

### Բաժին 2. Սանի մասին ընդհանուր տեղեկատվություն

ԱՈՒԶՊ-ում «Սանի մասին ընդհանուր տեղեկատվություն» բաժնի բոլոր ենթակետերը լրացվում են ՏՄԱԿ-ի կողմից երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքում տրված Արձանագրության հիման վրա: Այս տվյալները ևս ինքնաշխատ համակարգով կլրացվեն ԱՈՒԶՊ-ում Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի կրթության

[3] ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 150-Ն հրամանով հաստատվել է «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը» նոր շարադրմամբ, որում հավելված 1-ով ներկայացված է նաև ԱՈՒԶՊ-ի գործող ձևաթուղթը:

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների տվյալների միասնական բազայի գործարկման դեպքում:

Այն դեպքում, երբ երեխայի համար ԱՈՒԶՊ-ը մշակվում է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի առաջին կամ հերթական գնահատումից հետո, երեխայի նկարագիրը 2.4 կետում լրացվում է Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արձանագրության հիման վրա: Մնացած բոլոր դեպքերում երեխայի ԱՈՒԶՊ-ի տվյալ բաժնում տեղադրվում է նախորդ ուսումնական տարվա ԱՈՒԶՊ-ի տարեվերջյան գնահատման արդյունքում արձանագրված տեղեկատվությունը, որտեղ արտացոլված են երեխայի կարողությունները, հմտությունները, ձեռքբերումները և դժվարությունները:

| 2. ՍԱՆԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
|---|---|---|---|---|
| **2.1 Հաշմանդամություն**<br>□ ունի □ չունի | | | | |
| **2.2 Բացառիկ ընդունակությունների դրսևորումը հետևյալ ոլորտներում**<br>_____<br>_____ | | | | |
| **2.3 Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանն ըստ սանի խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության հետ կապված խնդիրների:** | | | | |
| **Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք** | **Աջակցության աստիճան** | | | |
| | **1-ին** | **2-րդ** | **3-րդ** | **4-րդ** |
| Խոսքի և լեզվի | | | | |
| Հաղորդակցման | | | | |
| Լսողության | | | | |
| Տեսողության | | | | |
| Ինտելեկտի (մտավոր) | | | | |
| Հուզական | | | | |
| Վարքի | | | | |
| Շարժունակության | | | | |

## Բաժին 3. Սանին, նրա մանկավարժներին և ծնողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների պլանավորում

ՀՀ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-217-Ն օրենքի համաձայն՝ երեխայի կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են երեք մակարդակում: Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ԱՈՒԶՊ-ների 3-րդ բաժնում արտացոլվում են ուսումնական հաստատության մակարդակի և տարածքային մակարդակի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները: Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները երեխաներին, դաստիարակներին և ծնողներին տրամադրվում են ինչպես ուսումնական հաստատության, այնպես էլ ՏՄԱԿ-ի կողմից:

ԱՈՒԶՊ-ում ուսումնական հաստատության մակարդակի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնելու համար հիմք է հանդիսանում կրթության և

զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման Արձանագրության մեջ ամփոփված տեղեկատվությունը: Այս մակարդակում ծառայությունները երեխային տրամադրվում են նախադպրոցական ուսումնական հաստատության միջոցների հաշվին, և դրանց ապահովման համար պատասխանատու է նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը:

ԱՈՒԶՊ-ի 3.1 կետում պլանավորվում են ուսուցման և ուսումնառության գործընթացների մատչելիության, ներառականության և արդյունավետության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման գործընթացները: Այստեղ արտացոլվում է ուսումնական նյութին համապատասխան բոլոր դիդակտիկ պարագաների, ուսումնադաստիարակչական մեթոդների, սկզբունքների և ռազմավարությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որը խթանելու է ուսումնական գործընթացի մատչելիությունը, ներառականությունը և արդյունավետությունը:

Այս ենթակետում ամրագրվում են նաև բոլոր այն *խելամիտ հարմարեցումները,* որոնք գնահատող խումբը սահմանել է տվյալ երեխայի համար կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքում: Խելամիտ հարմարեցումներ են համարվում երեխայի կարիքներին համապատասխան սահմանված աջակցող սարքերը, տեխնոլոգիաները, նրա տեղի, դիրքի, խմբասենյակների գույքի, ուսումնական նյութերի և ուսումնական գործընթացում կիրառվող այլ ռեսուրսների հարմարեցումները: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից երեխային անհրաժեշտ խելամիտ հարմարեցումներն իրականացվում են «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պետական բյուջեի միջոցներից տրամադրվող նպատակային ֆինանսավորման շրջանակում:

Տարածքային մակարդակում երեխային տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասին տեղեկատվությունը՝ մասնագիտական աջակցություն և խորհրդատվություն, խելամիտ հարմարեցումներ, դիդակտիկ պարագաներ, նյութեր և այլն, լրացվում են 3.2 կետի համապատասխան հատվածում:

Երեխայի ծնողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները պլանավորելիս պետք է հաշվի առնել այն, թե ինչպիսի ծառայությունների կարիք կարող է նա ունենալ: Բոլոր այն ծառայությունները, որոնք տրամադրվելու են ուսումնական հաստատության կողմից, լրացվում են 3.1 կետի՝ ծնողի համար նախատեսված բաժնում, իսկ այն ծառայությունները, որոնք տրամադրվելու են ՏՄԱԿ-ի կողմից, լրացվում են 3.2 կետի համապատասխան բաժնում: Հարկ է նշել, որ ուսումնական հաստատության և ՏՄԱԿ-ի մասնագետների միջև համագործակցությունը կարևոր գործոն է ծնողին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացում: ԱՈՒԶՊ-ի մշակման ժամանակ ՏՄԱԿ-ի և ուսումնական հաստատության ներկայացուցիչները համատեղ քննարկումների արդյունքում որոշում են կայացնում, թե որ ծառայությունն ում կողմից է տրամադրվելու: Ուսումնական հաստատությունը և ՏՄԱԿ-ը կարող են ծնողին տրամադրել խորհրդատվություն երեխայի առանձնահատկությունների, նրա պաշտպանության, ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացում ներգրավվելու նրա իրավունքի, որպես

մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամ նրա դերի, խելամիտ հարմարեցումների գործարկման, երեխայի մոտ ձևավորված դրական վարքի ամրապնդման, տանը երեխայի հետ աշխատելու ռազմավարությունների վերաբերյալ, ինչպես նաև նրան ներգրավել արդյունավետ ծնողավարության դասընթացներին և այլն:

Ինչպես ուսումնական հաստատության, այնպես էլ տարածքային մակարդակներում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստանում են նաև մանկավարժները՝ խորհրդատվությունների, վերապատրաստումների և մեթոդական աջակցության տեսքով: Աջակցության ծառայությունները պլանավորելիս նախ և առաջ պետք է իրականացնել կարիքների և ռեսուրսների գնահատում, որից հետո սահմանված աջակցության ծառայությունների մասին տեղեկատվությունն ըստ մակարդակների լրացնել համապատասխան սյունակներում:

Բոլոր այն աջակցության ծառայությունները, որոնք մանկավարժական աշխատողը ստանում է ուսումնական հաստատության մակարդակում, և որոնք միտված են *ուսուցման և ուսումնառության գործընթացների մատչելիության, ներառականության և արդյունավետության ապահովմանը, խելամիտ հարմարեցումների տրամադրմանը,* լրացվում են 3.1 կետում: Տարածքային մակարդակում մանկավարժներին տրամադրվող աջակցության ծառայությունները լրացվում են 3.2 կետում: Որպես աջակցության ծառայություն՝ ՏՄԱԿ-ի կողմից մանկավարժներին տրամադրվում է խորհրդատվություն և գործնական աջակցություն երեխայի ԱՈՒԶՊ-ով սահմանված խելամիտ հարմարեցումների, ինչպես օրինակ՝ ուսուցման և զարգացման անհատական տեխնիկական միջոցների, գույքի և սարքավորումների կիրառման, մատչելի ձևաչափերով տպագիր, աուդիո և վիդեո ուսումնական նյութերի ստեղծման, բանավոր և գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցների կիրառման վերաբերյալ: Հարկ է նշել, որ ՏՄԱԿ-ը կարող է նաև խորհրդատվություն տրամադրել ուսումնական հաստատության վարչական աշխատողներին համընդհանուր դիզայնի չափանիշներին համապատասխան մատչելի միջավայրի ստեղծման և խելամիտ հարմարեցումների ձեռքբերման ուղղությամբ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակը, տևողությունն ու ծավալները որոշվում են երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքում՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 150-Ն հրամանի հավելվածի Ձև 10-ի, և լրացվում են ԱՈՒԶՊ-ի 3.3 կետում՝ պարտադիր նշելով ծառայության տրամադրման օրը և ժամը: Արդյունքում երեխային տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ձևավորված գրաֆիկի պատճենը տրամադրվում է ծնողին:

Երեխային տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների գրաֆիկը կազմելիս պետք հաշվի առնել այն, որ դրանք տրամադրվում են դասերից հետո՝ ըստ որոշված ծավալի և տևողության, ինչպես անհատական, այնպես էլ խմբային պարապմունքների ձևաչափով: Հարկ է նշել, սակայն, որ որոշ դեպքերում, երբ երեխաներն ունենում են խմբում ընդհանուր պարապմունքներին ներառվելու, ակտիվ և մասնակցային լինելու դժվարություններ, ԱՈՒԶՊ-ում սահմանվում են նպատակներ, որոնք

միտված են այդ դժվարությունների հաղթահարմանը, և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են հենց պարապմունքների ընթացքում[4]:

| 3. ՍԱՆԻՆ, ՆՐԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԵՎ ԾՆՈՂԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ | | | |
|---|---|---|---|
| **3.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ** | ՄԱՆԿԱՎԱՐԺ | ԾՆՈՂ | ՍԱՆ |
| **Ուսուցման և դաստիարակության գործընթացի մատչելիության, ներառականության և արդյունավետության ապահովում** | • *Տրամադրել մեթոդական աջակցություն (խորհրդատվությունների, քննարկումների, սեմինարների և այլ ձևաչափով) գործնական աշխատանքներին երեխային ներգրավելու ռազմավարությունների վերաբերյալ:* | • *Ծնողին ակտիվ ներգրավել ԱՈՒԶՊ-ի մշակման և գնահատման գործընթացներին:*<br>• *Տրամադրել խորհրդատվություն երեխաների փարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ:* | • *Կիրառել ինտերակտիվ մեթոդներ, դիդակտիկ պարագաներ:*<br>• *Խրախուսել՝ օգտագործելով ժեստոնային համակարգ:*<br>• *Սահմանել օրվա գործողությունների հստակ կանոնակարգ:*<br>• *Ուսումնական պարապմունքները կառուցել ուսումնառության համընդհանուր դիզայնի սկզբունքներով:* |
| **Խելամիտ հարմարեցումների ապահովում** | • *Խելամիտ հարմարեցումների կիրառմանն ուղղված փորձի փոխանակման հանդիպումներ ՆՈՒՀ-ի դաստիարակների և երեխայի հետ աշխատող մասնագետների միջև:* | *Խորհրդատվություն ծնողին հետևյալ թեմաներով՝*<br>• *կենցաղային հմտությունների զարգացում երեխայի մոտ հաջորդական գործողություններ պարունակող նկար-քարտերի միջոցով,*<br>• *համատեղ (ծնող-ՆՈՒՀ) մշակված կանոնների պահպանման ռազմավարություններ:* | • *Խոսող գրքեր, բռնակով քանոն, ռետինե բռնակով մատիտներ, գրիչներ, հարմարեցված մկրատ, ձայնագրիչ:* |
| **3.2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (դասընթացներ, խորհրդատվություն, մասնագիտական, մեթոդական աջակցություն և այլն)** | ՄԱՆԿԱՎԱՐԺ | ԾՆՈՂ | ՍԱՆ |
| ***Դասընթաց*** | • *Իրականացնել վերապատրաստումներ դասավանդումն ու ուսումնառությունը համընդհանուր դիզայնի սկզբունքներին համապատասխան իրականացնելու համար:* | • *Ծնողին ներգրավել «Արդյունավետ ծնողավարություն» թեմայով սեմինարներին կամ քննարկումներին:* | • *Տրամադրել լոգոպեդի, հատուկ մանկավարժի, հոգեբանի ծառայություն:* |

[4] Այս և հաջորդող աղյուսակներում բերված են ԱՈՒԶՊ-ի բաժինների լրացման օրինակներ, որոնք որևէ կոնկրետ դեպքի հետ առնչություն չունեն, այլ արտացոլում են տվյալ բաժնի լրացման տրամաբանությունը:

| | | | |
|---|---|---|---|
| ***Խորհրդատվություն*** | • *Տրամադրել խորհրդատվություն երեխայի հետ արդյունավետ հաղորդակցվելու նպատակով այլընտրանքային հաղորդակցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ:* | • *Տրամադրել խորհրդատվություն հաղորդակցման փախարինիչների կիրառման սկզբունքների և արդյունավետության վերաբերյալ:* | |
| **3.3 Սանին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների գրաֆիկ** | | | |
| **Հատուկ մանկավարժական ծառայություն** | **Տևողություն** | **Ծավալներ** | **Ծառայությունների տրամադրման գրաֆիկ** |
| ***Լոգոպեդ*** | *60 րոպե՝ շաբաթական երկու անգամ - 30 րոպե* | *1-ին ասփիճան = հսկում* | *Երկուշաբթի՝ $11^{00}$-$11^{30}$ Չորեքշաբթի՝ $11^{30}$-$11^{00}$* |
| ***Տիֆլոմանկավարժ*** | | | |
| ***Սուրդոմանկավարժ*** | | | |
| ***Օլիգոֆրենոմանկավարժ*** | | | |
| **Հոգեբանական ծառայություն** | **Տևողություն** | **Ծավալներ** | **Ծառայությունների տրամադրման գրաֆիկ** |
| ***Հոգեբան*** | | | |
| **Սոցիալ-մանկավարժական ծառայություն** | **Տևողություն** | **Ծավալներ** | **Ծառայությունների տրամադրման գրաֆիկ** |
| ***Սոցիալական մանկավարժ*** | | | |

## Բաժին 4. Ծրագրային բաղադրիչներ՝ ըստ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի

Այս բաժինը լրացվում է՝ հիմք ընդունելով տվյալ ուսումնական տարվա համար սահմանված ծրագրային բաղադրիչները՝ հաշվի առնելով այն, թե երեխան դրանցից որոնք է ուսումնասիրելու, և որոնց համար է անհրաժեշտ պարզեցում և հարմարեցում: Ընդ որում, առաջին սյունակում նշվում են այն ծրագրային բաղադրիչները, որոնք սահմանված են տվյալ ուսումնական տարվա պլանով, երկրորդում՝ նրանք, որոնք երեխան ուսումնասիրելու է տվյալ ուսումնական տարվա ընթացքում, իսկ երրորդում՝ նրանք, որոնց համար անհրաժեշտ է բովանդակային պարզեցում և հարմարեցում:

Հարկ է նշել, որ ԱՈՒԶՊ-ում պլանավորվում են այն ծրագրային բաղադրիչները, որոնց՝ ծրագրերով սահմանված բովանդակության նվազագույն պահանջները յուրացնելու համար երեխան ունի ուսումնական նյութի պարզեցման և հարմարեցումների, կամ, եթե տվյալ առարկայից ունի բացառիկ ընդունակություններ, նյութի արագացված կամ խորացված ուսումնասիրման կարիք: Ծրագրային բաղադրիչները պարզեցվում և հարմարեցվում են նրանց կարողությունների առավելագույն ներուժին համապատասխան:

| 4. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԸՍՏ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ | | |
|---|---|---|
| **Տվյալ տարում ծրագրով նախատեսված բաղադրիչներ** | **Ծրագրային բաղադրիչներ, որոնք սանն ուսումնասիրում է տվյալ ուսումնական տարում** | **Ծրագրային բաղադրիչներ, որոնց համար անհրաժեշտ է անհատական պլանավորում** |
| | | |
| | | |

## Բաժին 5. Սանի երկարաժամկետ՝ տարեկան նպատակներն ըստ ծրագրային բաղադրիչների

Այս բաժինը լրացվում է բոլոր այն ծրագրային բաղադրիչների համար, որոնք անհրաժեշտ է պարզեցնել և հարմարեցնել կամ հակառակը՝ բարդացնել կամ խորացնել, ինչպես, օրինակ՝ բացառիկ ընդունակություններ ունեցող երեխաների դեպքում: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ծրագրային բաղադրիչի համար 5-րդ կետի աղյուսակը պետք է կրկնել՝ նշելով համապատասխան առարկայի անվանումը:

Բաժինը լրացվում է դաստիարակների և ծրագրային բաղադրիչների համար պատասխանատու մանկավարժների կողմից: Յուրաքանչյուր ծրագրային բաղադրիչի համար սահմանվում են տարեկան և կարճաժամկետ նպատակները՝ հիմնվելով չափորոշիչներով և ծրագրերով սահմանված կարողունակությունների և ակնկալվող վերջնարդյունքների, երեխայի կարողությունների և հմտությունների առկա մակարդակի վրա: Յուրաքանչյուր կարճաժամկետ նպատակի համար սահմանվում են այն միջավայրային հարմարեցումները, աջակցող սարքավորումները և տեխնոլոգիաները, որոնք անհրաժեշտ են այդ նպատակին հասնելու համար: Կարճաժամկետ նպատակների սահմանման ժամանակ նշվում են նաև դրանց իրականացման և արդյունքների գնահատման վերջնաժամկետները: Յուրաքանչյուր կարճաժամկետ նպատակի արդյունավետությունը գնահատվում է 1-5 միավորային սանդղակով, նախապես սահմանված ժամկետում՝ ցույց տալով երեխայի ձեռքբերումներն ու դինամիկ զարգացումը: Գնահատման նման համակարգը դաստիարակին հնարավորություն է տալիս հստակ տեսնել սահմանված նպատակների շուրջ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը և, եթե գնահատման ընթացքում դաստիարակը տեսնում է, որ արդյունքները «վատ» կամ «շատ վատ» են, դա հուշում է նրան, որ անհրաժեշտ է վերլուծել պատճառները և վերանայել երեխային տրամադրվող ուսումնամեթոդական աջակցությունը, միջավայրային հարմարեցումները, աջակցող սարքերը և տեխնոլոգիաները:

Իրականացված աշխատանքների արդյունքում երեխայի ձեռքբերումների, առաջընթացի, առկա դժվարությունների, ինչպես նաև այդ դժվարությունների հաղթահարման ուղղությամբ աշխատանքների մեթոդաբանության վերաբերյալ տեղեկատվությունն արձանագրվում է երկու ամիսը մեկ անգամ նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալի (մեթոդիստ) և ՏՄԱԿ-ի տնօրենի տեղակալի կողմից հրավիրված միասնական ժողովների ժամանակ՝ Անհատական ուսուցման և զարգացման պլանի գնահատման արձանագրության թերթիկում (Հավելված 2):

| 5. ՍԱՆԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ՝ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ | | | | |
|---|---|---|---|---|
| **ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ՝** Տարրական մաթեմատիկական պատկերացումներ | | | | |
| **Մանկավարժական աշխատող՝** ***Ա. Բաղդասարյան*** | | | | |
| **Արդյունք** բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով: **1 - շատ վատ, 2 – վատ, 3 – բավարար, 4 – լավ, 5 - շատ լավ** | | | | |
| **Տարեկան նպատակ** | **Կարճաժամկետ նպատակներ** | **Ուսումնամեթոդական աջակցություն,** | **Ժամկետ** | **Արդյունք** |

| | | միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | | |
|---|---|---|---|---|
| ***1. Երկրաչափական պատկերներից տարբերակում է շրջանը և քառակուսին[5]:*** | • *Ծեփամածիկից պատրաստում է շրջան, քառակուսի, ուրվագծում է երկրաչափական պատկերները:* | *Երկրաչափական պատկերների օրինակներ, նկար-քարտեր, ծեփամածիկ, աշխատանքային տետրեր:* | *15.10.2023* | *5* |
| | • *Կատարում է համադրման աշխատանքներ՝ ըստ օրինակի:* | *Երկրաչափական պատկերներ պարունակող խաղեր:* | *25.12.2023* | *4* |
| | • *Խմբավորում է շրջապատող առարկաները կամ դրանց նկար քարտերը՝ ըստ ձևի:* | *Երկրաչափական պատկերներ, կլոր կամ քառակուսի ձև ունեցող առարկաներ կամ համապատասխան նկար-քարտեր:* | *28.02.2024* | *4* |
| | • *Համեմատում է երկրաչափական պատկերները՝ նշելով նրանց հատկությունները:* | *Գունավոր թուղթ, մկրատ, սոսինձ, երկրաչափական պատկերներ պարունակող խաղեր:* | *20.05.2024* | *5* |

## Բաժին 6. Սանի երկարաժամկետ՝ տարեկան նպատակներն ըստ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների

Այս բաժինը լրացվում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների կողմից: Հիմք ընդունելով երեխայի տարիքային զարգացման չափանիշները, հաշվի առնելով երեխայի գործունեության ու մասնակցության, ինչպես նաև խոսքի, հոգեկան զարգացման և անձնային, հուզակամային առանձնահատկությունները՝ յուրաքանչյուր մասնագետ սահմանում է նպատակներ և լրացնում համապատասխան ենթակետում: Հարկ է նշել, որ թե՛ դաստիարակները և թե՛ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետները նպատակներ սահմանելիս պետք է լինեն համագործակցային և տեղեկացված երեխայի համար սահմանված բոլոր նպատակների վերաբերյալ: Հատկապես այն դեպքերում, երբ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մի մասը տրամադրվում է ՏՄԱԿ-ի, իսկ մյուս մասը՝ ուսումնական հաստատության կողմից, ծառայություններ տրամադրող մասնագետները պետք է միասին սահմանեն առաջնահերթությունները և աշխատանքներ իրականացնեն միևնույն ուղղությամբ: Եթե առաջանում են դժվարություններ մանկավարժահոգեբանական ծառայությունների 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխայի կրթության և զարգացման կազմակերպման ընթացքում, ապա անհրաժեշտ է համագործակցել նաև հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների հետ: Այս կենտրոնները կարող են տրամադրել անհրաժեշտ նյութեր, ուղղորդել դաստիարակներին և մասնագետներին կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու արդյունավետ մեթոդների ընտրության հարցում:

[5] Տարեկան նպատակները բոլոր բաժիններում բերված են մեկ նպատակի օրինակով:

## 6. ՍԱՆԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ՝ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### 6.1 ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**Արդյունք** բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:
**1 - շատ վատ, 2 – վատ, 3 – բավարար, 4 – լավ, 5 - շատ լավ**

**Լոգոպեդ՝ *Լ.Դումանյան***

| Տարեկան նպատակ | Կարճաժամկետ նպատակներ | Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | Ժամկետ | Արդյունք |
|---|---|---|---|---|
| ***1. Վերապատմում է լսած հեքիաթները:*** | • *Մատնանշում է հեքիաթների հերոսներին և անվանում նրանց:* | *Հեքիաթի հերոսների նկար-քարտեր:* | *27.10.2023* | *4* |
| | • *Դասավորում է սյուժետային նկարները՝ պահպանելով հեքիաթում կատարված գործողությունների հաջորդականությունը:* | *Հեքիաթի սյուժեն պատկերող նկարներ:* | *28.12.2023* | *5* |
| | • *Պատմում է հեքիաթը՝ համապատասխան սյուժետային նկարների և դաստիարակի ուղղորդող հարցերի օգնությամբ:* | *Հեքիաթի սյուժեն պատկերող նկարներ:* | *15.03.2024* | *5* |
| | • *Վերապատմում է հեքիաթի հիմնական սյուժեն 4-5 պարզ նախադասությամբ:* | | *24.05.2024* | *5* |

**Տիֆլոմանկավարժ՝ *Ա. Մարկոսյան***

| Տարեկան նպատակ | Կարճաժամկետ նպատակներ | Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | Ժամկետ | Արդյունք |
|---|---|---|---|---|
| ***1. Կողմնորոշվում է իրեն ծանոթ տարածության մեջ:*** | • *Երկու ձեռքով միաժամանակ շոշափում և անվանում է տիկնիկի մարմնի մասերը:* | *Տիկնիկ, որը կանգնած դիրքում հասնում է երեխայի գոտկատեղին:* | *27.10.2023* | *4* |
| | • *Կատարում է մարմնի շարժումներ և պարզ գործողություններ մասնագետի հրահանգով և ուղղորդմամբ (օրինակ՝ շարժում է ձեռքերը վերև, ներքև, աջ, ձախ, քայլում է, ցատկում տեղում, նստում), քայլում է տարբեր հարթությունների վրայով:* | *Ավազ, խոտ, փափուկ ներքնակ:* | *28.12.2023* | *5* |
| | • *Շոշափում և նշում է իր աշխատանքային սեղանի ձևը, որոշում իրեն ծանոթ առարկաների դիրքը սեղանի վրա և տեղափոխում ըստ հրահանգի (օրինակ՝ գնդակը դիր տուփի մեջ, տուփից դուրս, քեզանից դեպի աջ և այլն):* | *Սեղան, տարբեր առարկաներ և խաղալիքներ:* | *15.03.2024* | *5* |
| | • *Որոշում է իր սեղանի տեղն ու դիրքը խմբասենյակում, գտնում է* | *Դաստիարակի խոսքային ուղղորդումներ, ձայնագրիչ:* | *24.05.2024* | *4* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *սանհանգույցը և իր մահճակալը՝ օգտվելով ձայնային հուշումներից:* | | | |
| **Սուրդոմանկավարժ՝ *Ա. Արսենյան*** | | | | |
| **Տարեկան նպատակ** | **Կարճաժամկետ նպատակներ** | **Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ** | **Ժամկետ** | **Արդյունք** |
| ***1. Լսում և մատնանշում է տարբեր հաճախականության թեմատիկ բառեր և արտահայտություններ*** | • *Լսողությամբ տարբերակում է կենդանիների բնաձայները և կենցաղային ձայները մինչև 3 մետր հեռավորությունից՝ թույլ տալով վրիպումներ հնչողությամբ մոտ ձայնարկությունների դեպքում:* | *Հանգիստ և անաղմուկ միջավայր, հայելի, երաժշտական գործիքներ, առարկաներ, խաղալիքներ, դերային խաղերի պարագաներ:* | *25.10.2023* | *4* |
| | • *Լսողությամբ տարբերակում, կրկնօրինակում և մատնանշում է 4-5 բառ «Ընտանիքի անդամներ», «Միրգ», «Բանջարեղեն», «Աշուն», «Նոր տարի» թեմաների վերաբերյալ՝ թույլ տալով վրիպումներ հնչողությամբ մոտ բառերի դեպքում:* | *Հանգիստ և անաղմուկ միջավայր, թեմատիկ նկար – քարտեր:* | *24.12.2023* | *5* |
| | • *Լսողությամբ տարբերակում, մատնանշում և, հնարավորինս նմանակելով, արտաբերում է 4-5-ական բառ կամ արտահայտություն «Ձմեռ», «Սննդամթերք», «Հագուստ», «Խաղալիքներ» թեմաների վերաբերյալ՝ թույլ տալով վրիպումներ հնչողությամբ և իմաստով մոտ բառերի և արտահայտությունների դեպքում:* | *Հանգիստ և անաղմուկ միջավայր, թեմատիկ նկար - քարտեր, կենդանիների մուլյաժներ:* | *01.03.2023* | 5 |
| | • *Լսողությամբ տարբերակում, մատնանշում և մոտավոր արտաբերում է 4-5-ական բառ ու արտահայտություն «Գործողություններ», «Այգի», «Բանջարանոց», «Գույներ», «Գարուն» , «Բնության երևույթներ», «Մասնագիտություններ» թեմաների վերաբերյալ՝ թույլ տալով վրիպումներ հնչողությամբ և իմաստով մոտ բառերի և արտահայտությունների դեպքում:* | *Հանգիստ և անաղմուկ միջավայր, թեմատիկ նկար – քարտեր:* | *25.05.2023* | 5 |
| **Օլիգոֆրենոմանկավարժ՝ *Կ. Մարտիրոսյան*** | | | | |

| Տարեկան նպատակ | Կարճաժամկետ նպատակներ | Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | Ժամկետ | Արդյունք |
|---|---|---|---|---|
| ***1. Կողմնորոշվում է ժամանակի մեջ:*** | • *Պատմում է նախորդ, հաջորդ և փվյալ օրվա ընթացքում կատարված իրադարձությունների մասին (օրինակ՝ ըստ հրահանգի պատմում է, թե ինչ է կատարվել երեկ):* | | *31.10.2023* | *4* |
| | • *Խմբավորում է իրադարձություններ և գործողություններ պատկերող նկար-քարտերն՝ ըստ կատարման ժամանակահատվածի:* | *Գործողություններ պատկերող նկար-քարտեր:* | *25.12.2023* | *4* |
| | • *Ներկայացված իրադարձություններն ու գործողությունները ընդհանրացնում է՝ նշելով, թե երբ են դրանք կատարվել կամ կատարվելու:* | | *18.03.2024* | *5* |
| | • *Ըստ նշանակության օգտագործում է «երեկ», «այսօր», «վաղը» հասկացությունները՝ կապելով դրանք առօրյա կյանքում կատարվող գործողությունների հետ:* | | *17.05.2024* | *5* |
| **Էրգոթերապիստ՝ *Է. Աթոյան*** | | | | |
| **Տարեկան նպատակ** | **Կարճաժամկետ նպատակներ** | **Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ** | **Ժամկետ** | **Արդյունք** |
| ***1. Օգտագործում է հարմարեցված գդալն ապուրներ ուտելիս:*** | • *Կատարում է ձեռքերի համակարգված գործողություններ առարկաներով:* | *Աչք-ձեռք կոորդինացիան զարգացնող վարժություններ, խաղեր՝ խճանկար, ամրակներ, խորանարդիկներ:* | *27.10.2023* | *4* |
| | • *Ընկալում է տարածությունն իր և սեղանի միջև, սպասքի տեղը և դիրքը սեղանի վրա:* | *Խաղ՝ «Խոհանոց», սյուժետային նկար-քարտեր, տարածական կողմնորոշման խաղեր՝ վերև, ներքև, աջ, ձախ, տեսանյութեր:* | *28.12.2023* | *4* |
| | • *Բռնում է հարմարեցված գդալն իրեն հարմար տարբերակով և կիրառում մասնագետի ուղղորդմամբ:* | *Հարմարեցված գդալ, սպասքի պարագաներ, սեղան, աթոռ, համատեղ փորձառություն, կրկնօրինակման մեթոդ:* | *15.03.2024* | *5* |
| | • *Ինքնուրույն ուտում է ապուրը՝ ճիշտ բռնելով հարմարեցված գդալը:* | *Հարմարեցված գդալ, սպասքի պարագաներ, սեղան, աթոռ:* | *24.05.2024* | *4* |
| **6.2 ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**<br>**Հոգեբան՝ *Շ. Թադևոսյան*** | | | | |
| **Արդյունք** բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:<br>**1 - շատ վատ, 2 – վատ, 3 – բավարար, 4 – լավ, 5 - շատ լավ** | | | | |
| **Տարեկան նպատակ** | **Կարճաժամկետ նպատակներ** | **Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային** | **Ժամկետ** | **Արդյունք** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | **հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ** | | |
| **1. *Շփվում է հասակակիցների հետ:*** | • *Շփվում է սահմանափակ թվով երեխաների հետ մասնագետի անմիջական ուղղորդմամբ:* | *Սյուժետադերային խաղեր, իրավիճակային քարտեր, տեսանյութեր վարքի մոդելավորման համար:* | *29.10.2023* | *4* |
| | • *Մասնակցում է խմբային աշխատանքներին՝ մասնագետի ուղղորդմամբ հետևելով հաղորդակցման կանոններին:* | *Հաղորդակցման կանոնների պաստառ, կանոններով խաղեր, խմբային աշխատանքներ, սոցիալական պատմություններ, դերախաղ:* | *25.12.2023* | *4* |
| | • *Մասնագետի ուղղորդմամբ նախաձեռնողականություն է ցուցաբերում հասակակիցների հետ շփման ընթացքում (մոտենում է, առաջարկում խաղալ և այլն):* | *Հրահանգների քարտեր, մասնագետի կողմից առաջարկվող իրավիճակային լուծումներ պահանջող առաջադրանքներ:* | *29.03.2024* | *5* |
| | • *Ինքնուրույն հաղորդակցվում է հասակակիցների հետ:* | *Դերային և թիմային մրցակցային խաղեր, պարագաներ:* | *23.05.2024* | *5* |
| **6.3 ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**<br>**Սոցիալական մանկավարժ՝ *Ա. Սողոմոնյան*** | | | | |
| **Արդյունք** բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:<br>**1 - շատ վատ, 2 – վատ, 3 – բավարար, 4 – լավ, 5 - շատ լավ** | | | | |
| **Տարեկան նպատակ** | **Կարճաժամկետ նպատակներ** | **Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ** | **Ժամկետ** | **Արդյունք** |
| **1. Տրամադրում է տեղեկատվություն իր և ընտանիքի մասին:** | • *Տիկնիկի վրա ցույց է տալիս մարմնի մասերը, պատմում է իր ֆիզիկական ես-ի մասին՝ նշելով մի քանի հիմնական առանձնահատկություն, օրինակ՝ տարիքը, սեռը և այլն:* | *Տիկնիկ* | *10.10.2023* | *5* |
| | • *Պատմում է իր մասին՝ պատասխանելով «ի՞նչ եմ սիրում», «ի՞նչ չեմ սիրում» հարցերին:* | | *15.11.2023* | *4* |
| | • *Նշում է իր ընտանիքի անդամներին, նրանց անունները, մասնագիտությունները, ցույց է տալիս համապատասխան լուսանկարը:* | *Ընտանիքի անդամների լուսանկարներ, մասնագիտություն պատկերող նկար-քարտեր:* | *01.03.2024* | *4* |
| | • *Պատմում է իր ընտանիքի մասին՝ նկարագրելով նրանց նախասիրությունները և մասնագիտությունները:* | *Մասնագիտություն պատկերող նկար-քարտեր, սյուժետային նկարներ:* | *22.05.2024* | *5* |

## Բաժին 7. ԱՈՒԶՊ-ի տարեվերջյան գնահատում

«ԱՈՒԶՊ-ի տարեվերջյան գնահատում» բաժինը լրացվում է տվյալ ուսումնական տարվա ավարտին՝ մայիսի երկրորդ կեսից մինչև հունիսի վերջն ընկած

ժամանակահատվածում[6]: ԱՈՒԶՊ-ի տարեվերջյան գնահատմանը մասնակցում են ԱՈՒԶՊ-ը մշակող և իրականացնող խմբի անդամները, այդ թվում՝ երեխան և նրա ծնողը: Այն լրացվում է ԱՈՒԶՊ-ը մշակող, իրականացնող և գնահատող խմբի կողմից համատեղ քննարկման արդյունքում:

ԱՈՒՊ-ի 7.1 կետում մանրամասն նկարագրվում են սովորողի ձեռքբերումները, կարողությունները և հմտությունները՝ ըստ գործունեության և մասնակցության ծածկագրերի: Այնուհետև, օգտվելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման չափանիշներից, ԱՈՒՊ-ը գնահատող թիմը յուրաքանչյուր ծածկագրի համար սահմանում է սովորողի կատարողականության[7] և կարողության[8] որակիչը, որը կարող է փոփոխվել կամ մնալ նույնը, ինչ ընթացիկ տարում:

Ինչպես և մյուս երեխաների դեպքում, գնահատման գործիքները, ինչպիսիք են դիտարկումները, երեխայի ուսումնական աշխատանքների նմուշների ուսումնասիրությունը, նրա մասնակցության, ուսումնական պարապմունքների ընթացքում ցուցաբերած ակտիվության վերլուծությունը և այլն, օգնում են գնահատել, թե որքանով են հաղթահարվել ԱՈՒԶՊ-ով սահմանված նպատակները: Դաստիարակները, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետները, ինչպես նաև ծնողը երեխայի առաջադիմության և զարգացման վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը ներկայացնում են միմյանց ԱՈՒԶՊ-ի տարեվերջյան գնահատման ժամանակ: Արդյունքում ձևավորվում է երեխայի նկարագիր, որն այնուհետև հիմք է հանդիսանում նրա հաջորդ տարվա ԱՈՒԶՊ-ի մշակման համար:

Այս քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվում նաև այն հարցին, թե ինչ դժվարություններ են առաջացել ԱՈՒԶՊ-ի իրականացման ընթացքում, և այդ ամենը հաշվի է առնվում հաջորդ տարվա ԱՈՒԶՊ-ի մշակման ժամանակ: Հաջորդ տարվա ԱՈՒԶՊ-ի մշակման, իրականացման և գնահատման գործընթացների հետ կապված առաջարկները, որոնք տարեկան գնահատման արդյունքում տրվում են դաստիարակների, ծնողի, երեխայի և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների կողմից, արտացոլվում են 7.2 կետում: Այստեղ կարող են նշվել հաջորդ ուսումնական տարվա կամ կրթական շրջանի համար երեխային անհրաժեշտ հարմարեցումները (օրինակ՝ լուսավորություն, աղմուկի նվազեցում, տեղի, դիրքի փոփոխություն և այլն), ուսուցման առանձնահատկությունները (օրինակ՝ մեծ տառաչափ, դանդաղ և հստակ խոսք, խորհրդանիշներ և այլն), անհրաժեշտ մասնագիտական ծառայությունները և հարմարեցում պահանջող առարկաները: Անհրաժեշտության

---

[6] Եթե երեխան ավագ նախադպրոցական տարիքի է, ապա աջակցության ծառայությունները կարող են տրամադրվել մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 31՝ դեպի դպրոց սահուն անցումն ապահովելու համար:

[7] ***կատարողականության որակիչը*** ցույց է տալիս, թե ինչպես է երեխան կատարում առաջադրանքները, գործողությունները և որքան մասնակցային է կոնկրետ միջավայրում:

[8] ***կարողունակության որակիչը*** նկարագրում է որևէ առաջադրանք կամ գործողություն կատարելու երեխայի ունակությունը հարմարեցված միջավայրում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ժամանակ այս որակիչը ցույց է տալիս երեխայի ֆունկցիոնալության հավանական ամենաբարձր մակարդակը, որին նա կարող է հասնել տվյալ գործունեության մեջ՝ կրտսեր և միջին տարիքային խմբերի երեխաների դեպքում՝ միջին խմբի ավարտին, իսկ ավագ խմբի երեխաների դեպքում՝ ավագ խմբի ավարտին:

դեպքում այստեղ կարող են նշվել նաև առաջարկություններ ծնողին՝ ամառային արձակուրդների ընթացքում երեխայի հետ տանն աշխատելու համար:

## 7. ԱՈՒԶՊ-Ի ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

**7.1 ՍԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

**7.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ԿԱՄ ՀԱՋՈՐԴ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ**

_____
_____
_____
_____
_____

**Սանի կրթության արդյունավետ իրականացման համար առաջարկվում է՝**

**▫ Սանի կրթությունն ու զարգացումը կազմակերպել անհատական ուսուցման և զարգացման պլանով**

- Հետևյալ ծրագրային բաղադրիչների հարմարեցումներով (նշել բոլոր անհրաժեշտները)

_____ _____
_____ _____
_____ _____

- **Հետևյալ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմամբ (նշել բոլոր անհրաժեշտները)**

  **▫ Հատուկ մանկավարժական ծառայություն (լոգոպեդ, օլիգոֆրենոմանկավարժ, սուրդոմանկավարժ, տիֆլոմանկավարժ**, էրգոթերապիստ**)**

  **▫ Սոցիալական մանկավարժի ծառայություն**

  **▫ Հոգեբանական ծառայություն**

**▫ Իրականացնել սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝**

**▫ _____ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության) խնդիրներով պայմանավորված մանկավարժահոգեբանական աջակցության _____ աստիճանից _____ աստիճան փոփոխելու նպատակով:**

**▫ Կրթության** և զարգացման **առանձնահատուկ պայմանների կարիքը չեղարկելու նպատակով:**

Գնահատման հիմնավորում _____

**ԾՆՈՂԻ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ) ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄԸ**

Ես՝ _____ս, սույնով հավաստիացնում եմ, որ մասնակցել եմ երեխայիս՝ _____ ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացին և գիտակցում եմ, որ սույն ԱՈՒԶՊ-ի տարեկան և կարճաժամկետ նպատակներն ու դրանց իրականացման գործընթացը հարմարեցվել և պարզեցվել են երեխայիս կարողությունների և հմտությունների առավելագույն ներուժին համապատասխան, և որ իմ երեխայի կրթության արդյունքներն ու ձեռքբերումները գնահատվելու են ըստ իր ԱՈՒԶՊ-ով սահմանված նպատակների:

_____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

**ԱՈՒԶՊ-ը մշակող խումբ՝**

| | Ազգանուն, անուն | Պաշտոն | Ստորագրություն |
|---|---|---|---|
| 1. | _____ | _____ | _____ |
| 2. | _____ | _____ | _____ |
| 3. | _____ | _____ | _____ |
| 4. | _____ | _____ | _____ |

| **Հաստատված է՝** | |
|---|---|
| _____ նախադպրոցական ուսումնական հաստատություն | _____ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն |
| Տնօրեն՝ _____ _____<br>(անուն, ազգանուն) (ստորագրություն)<br><br>Ամսաթիվ՝ ԿՏ | Տնօրեն՝ _____ _____<br>(անուն, ազգանուն) (ստորագրություն)<br><br>Ամսաթիվ՝ ԿՏ |

Հավելված 1

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

| |
|---|
| **1. ՍԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐ** |
| 1.1 Ազգանուն, անուն, հայրանուն՝ |
| 1.2 Ծննդյան վայր՝ |
| 1.3 Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝ |
| 1.4 Սեռը՝ □ իգական □ արական |
| 1.5 Քաղաքացիությունը՝ |
| 1.6 Բնակության հասցեն՝ |
| 1.7 Ուսումնական հաստատությունը՝ |
| 1.8 Խումբ (նշել ուսումնական տարին)՝ |
| 1.9 Ծնողների (օրինական ներկայացուցիչների) անուններն ու հեռախոսահամարները՝ |
| 1.10 Արտակարգ իրավիճակների դեպքում՝ կապի միջոց՝ աշխատանքային և բնակարանի հեռախոսահամարներ՝ |
| **2. ՍԱՆԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |
| **2.1 Հաշմանդամություն**<br>□ ունի □ չունի |
| **2.2 Բացառիկ ընդունակությունների դրսևորումը հետևյալ ոլորտներում**<br>_____<br>_____<br>_____ |
| **2.3 Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանն ըստ սանի խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության հետ կապված խնդիրների:** |

| **Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք** | **Աջակցության աստիճան** | | | |
|---|---|---|---|---|
| | **1-ին** | **2-րդ** | **3-րդ** | **4-րդ** |
| Խոսքի և լեզվի | | | | |
| Հաղորդակցման | | | | |
| Լսողության | | | | |
| Տեսողության | | | | |
| Ինտելեկտի (մտավոր) | | | | |
| Հուզական | | | | |
| Վարքի | | | | |
| Շարժունակության | | | | |
| **2.4 ՍԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ** | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

| **3. ՍԱՆԻՆ, ՆՐԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԵՎ ԾՆՈՂԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ** | | | |
|---|---|---|---|
| 3.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՄԱՆԿԱՎԱՐԺ | ԾՆՈՂ | ՍԱՆ |
| Ուսուցման և դաստիարակության գործընթացի մատչելիության, ներառականության և արդյունավետության ապահովում | | | |
| Խելամիտ հարմարեցումների ապահովում | | | |
| 3.2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (դասընթացներ, խորհրդատվություն, | ՄԱՆԿԱՎԱՐԺ | ԾՆՈՂ | ՍԱՆ |

| | | | |
|---|---|---|---|
| մասնագիտական, մեթոդական աջակցություն և այլն) | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

| 3.3 ՍԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՖԻԿ | | | |
|---|---|---|---|
| **Հատուկ մանկավարժական ծառայություն** | **Տևողություն** | **Ծավալներ** | **Ծառայությունների տրամադրման գրաֆիկ** |
| *լոգոպեդ* | | | |
| *տիֆլոմանկավարժ* | | | |
| *սուրդոմանկավարժ* | | | |
| *օլիգոֆրենոմանկավարժ* | | | |
| *էրգոթերապիստ* | | | |
| **Հոգեբանական ծառայություն** | **Տևողություն** | **Ծավալներ** | **Ծառայությունների տրամադրման գրաֆիկ** |
| *հոգեբան* | | | |
| **Սոցիալ մանկավարժական ծառայություն** | **Տևողություն** | **Ծավալներ** | **Ծառայությունների տրամադրման գրաֆիկ** |
| *սոցիալական մանկավարժ* | | | |

| 4. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ, ԸՍՏ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ | | |
|---|---|---|
| **Տվյալ տարում ծրագրով նախատեսված բաղադրիչներ** | **Ծրագրային բաղադրիչներ, որոնք սանն ուսումնասիրում է տվյալ ուսումնական տարում** | **Ծրագրային բաղադրիչներ, որոնց համար անհրաժեշտ է անհատական պլանավորում** |
| | | |
| | | |
| | | |
| | | |

| 5. ՍԱՆԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ՝ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ |
|---|
| ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Մանկավարժական աշխատող՝ _____**<br><br>**_____** | | | | |
| **Արդյունք** բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:<br><br>**1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ** | | | | |
| **Տարեկան նպատակ** | **Կարճաժամկետ նպատակներ** | **Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ** | **Ժամկետ** | **Արդյունք** |
| | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| **6. ՍԱՆԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ՝ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** | | | | |
| **6.1 ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | | | | |
| **Արդյունք** բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:<br><br>**1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ** | | | | |
| **Լոգոպեդ _____** | | | | |
| **Տարեկան նպատակ** | **Կարճաժամկետ նպատակներ** | **Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ** | **Ժամկետ** | **Արդյունք** |
| **1.** | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| **Տիֆլոմանկավարժ _____** | | | | |

| Տարեկան նպատակ | Կարճաժամկետ նպատակներ | Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | Ժամկետ | Արդյունք |
|---|---|---|---|---|
| 1. | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| Սուրդոմանկավարժ _____ | | | | |
| Տարեկան նպատակ | Կարճաժամկետ նպատակներ | Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | Ժամկետ | Արդյունք |
| 1. | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| Օլիգոֆրենոմանկավարժ _____ | | | | |
| Տարեկան նպատակ | Կարճաժամկետ նպատակներ | Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | Ժամկետ | Արդյունք |
| 1. | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| Էրգոթերապիստ _____ | | | | |
| Տարեկան նպատակ | Կարճաժամկետ նպատակներ | Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | Ժամկետ | Արդյունք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| | • | | | |

**6.2 ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Հոգեբան** _____

**Արդյունք** բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:

**1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ**

| Տարեկան նպատակ | Կարճաժամկետ նպատակներ | Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | Ժամկետ | Արդյունք |
|---|---|---|---|---|
| 1. | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| | • | | | |

**6.3 ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Սոցիալական մանկավարժ**

**Արդյունք** բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:

**1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ**

| Տարեկան նպատակ | Կարճաժամկետ նպատակներ | Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ | Ժամկետ | Արդյունք |
|---|---|---|---|---|
| | • | | | |
| | • | | | |
| | • | | | |
| | • | | | |

## 7. ԱՈՒԶՊ-Ի ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 7.1 ՍԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### 7.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ԿԱՄ ՀԱՋՈՐԴ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

_____
_____
_____
_____

**Սանի կրթության արդյունավետ իրականացման համար առաջարկվում է՝**

□ **Սանի կրթությունն ու զարգացումը կազմակերպել անհատական ուսուցման և զարգացման պլանով**

- Հետևյալ ծրագրային բաղադրիչների հարմարեցումներով (նշել բոլոր անհրաժեշտները)

_____ _____
_____ _____
_____ _____

- Հետևյալ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմամբ (նշել բոլոր անհրաժեշտները)

□ Հատուկ մանկավարժական ծառայություն (լոգոպեդ, օլիգոֆրենոմանկավարժ, սուրդոմանկավարժ, տիֆլոմանկավարժ, էրգոթերապիստ)

□ Սոցիալական մանկավարժի ծառայություն

□ Հոգեբանական ծառայություն

□ **Իրականացնել սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝**

□ _____ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության) խնդիրներով պայմանավորված մանկավարժահոգեբանական աջակցության _____ աստիճանից _____ աստիճան փոփոխելու նպատակով:

□ Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը չեղարկելու նպատակով:

Գնահատման հիմնավորում _____

**ԾՆՈՂԻ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ) ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄԸ**

Ես՝ _____ս, սույնով հավաստիացնում եմ, որ մասնակցել եմ երեխայիս՝ _____ ԱՈՒԶՊ-ի մշակման գործընթացին և գիտակցում եմ, որ սույն ԱՈՒԶՊ-ի տարեկան և կարճաժամկետ նպատակներն ու դրանց իրականացման գործընթացը հարմարեցվել և պարզեցվել են երեխայիս կարողությունների և հմտությունների առավելագույն ներուժին համապատասխան, և որ իմ երեխայի կրթության և զարգացման արդյունքներն ու ձեռքբերումները գնահատվելու են ըստ իր ԱՈՒԶՊ-ով սահմանված նպատակների:

_____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

**ԱՈՒԶՊ-ը մշակող խումբ՝**

| | Ազգանուն, անուն | Պաշտոն | Ստորագրություն |
|---|---|---|---|
| 1. | _____ | _____ | _____ |
| 2. | _____ | _____ | _____ |
| 3. | _____ | _____ | _____ |
| 4. | _____ | _____ | _____ |

| | |
|---|---|
| Հաստատված է՝ | |
| _____ **նախադպրոցական ուսումնական հաստատություն** | _____ **տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն** |
| Տնօրեն՝ _____ _____<br>(անուն, ազգանուն) (ստորագրություն)<br>Ամսաթիվ՝ ԿՏ | Տնօրեն՝ _____ _____<br>(անուն, ազգանուն) (ստորագրություն)<br>Ամսաթիվ՝ ԿՏ |

Հավելված 2

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Սանի անուն, հայրանուն, ազգանուն՝** _____

**Ուսումնական հաստատություն՝** _____, **Խումբ՝** _____

**Ամփոփ նկարագիր** (ձեռքբերումներ, առաջընթաց, առկա դժվարություններ)

_____
_____
_____
_____
_____

**Առաջարկություններ** (առկա դժվարությունների հաղթահարմանն ուղղված աշխատանքների ձևեր և մեթոդաբանություն)

_____
_____
_____
_____
_____

Ուսումնական հաստատության տնօրենի տեղակալ՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ տարածքային մանկավարժահոգեբանական
աջակցության կենտրոնի տնօրենի տեղակալ՝ _____ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հաստատման օր, ամիս, տարի՝ _____

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգում. երեխաներ և երիտասարդներ. ՖՄԴ ԵԵ, 2007:
2. Թադևոսյան Ս., Անհատական ուսուցման պլանի մշակման մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Երևան, 2016:
3. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք:
4. «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի N 34-Ն հրաման:
5. Տիքա Ռ., Էբերի Բ., Ջոնսթոն Ք., Պողոսյան Ա. և Հանթ Փ. (Խմբ.) (2018) Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 249 էջ:
6. Connecticut State Department of Education (CSDE), IEP Manual, Revised April 2023.
7. Ministry of Education, The Individual Education Plan, a resource guide, Ontario, 2004.
8. National Council for Special Education (NCSE), Guidelines on the individual education plan process, Dublin, 2006.

Սվաջյան Ա. Հ., Ադամյան Հ. Ա., Գարեգինյան Ա. Ա., Մարգարյան Լ. Հ.,
Հակոբյան Լ. Գ., Հարությունյան Գ. Հ.

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Մեթոդական ուղեցույց